600.0064.07.03.18

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

7 մարտի 2018 թվականի №64Ա
ք.Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի №105Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2018 թվականի փետրվարի 14-ին «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով մեկ տարի ժամկետով երկարաձգել Հանձնաժողովի 2017 թվականի մարտի 29-ի «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՎԱՅՈՑ ԱՐԵՎ» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №105Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «ՎԱՅՈՑ ԱՐԵՎ» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0601 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0601 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը.

բ) Ընկերությունը հայտնել է, որ կառուցման աշխատանքները սահմանված ժամկետում ավարտելուն խոչընդոտել է բանկի կողմից ֆինանսավորման ուշացումը.

գ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 39-րդ կետի համաձայն՝ արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը կարող է երկարաձգվել նախկինում սահմանված կառուցման ժամանակահատվածից ոչ ավելի.

դ) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պաշտոնական կայքում տեղակայված տեղեկատվության համաձայն՝ 2017 թվականի հուլիսի 31-ին տեղի է ունեցել Ընկերության մասնակցների փոփոխություն՝ Ընկերության 50 տոկոս բաժնեմասի օտարմամբ, ինչի վերաբերյալ Ընկերությունը «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված կարգով և ժամկետում չի տեղեկացրել Հանձնաժողովին.

ե) Հանձնաժողովը 2018 թվականի փետրվարի 19-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով.

զ) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի՝

1) 2-րդ կետի համաձայն՝ գործունեության լիցենզիա ունեցող որևէ անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայատերը առանց Հանձնաժողովի թույլտվության իրավունք չունի ձեռք բերել նույն կամ մեկ այլ գործունեության լիցենզիա ունեցող անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս կամ ունենալ փայամասնակցություն, ինչպես նաև վաճառել 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր,

2) 4-րդ կետի համաձայն՝ փոքր հիդրոէլեկտրակայաններում և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության լիցենզիա ունեցող անձինք սույն հոդվածի 1-3-րդ կետերում նշված գործարքներն իրականացնում են առանց Հանձնաժողովի թույլտվության (համաձայնության), եթե այդ անձինք էներգետիկայի բնագավառում չունեն գործունեության այլ տեսակի լիցենզիա կամ այլ կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա: Փոքր հիդրոէլեկտրակայաններում և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության լիցենզիա ունեցող անձինք սույն հոդվածի 1-3-րդ կետերում նշված գործարքների իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնում են Հանձնաժողովին.

է) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը կատարված խախտումը պատճառաբանել է որպես օրենքի չիմացության հետևանք և հայցել է Հանձնաժողովի ներողամտությունը.

ը) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետը՝ 50 տոկոս բաժնեմասի վաճառքի գործարքի վերաբերյալ գրավոր չի տեղեկացրել Հանձնաժողովին, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, 42-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը, Կարգը, այդ թվում՝ Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Վեց ամիս ժամկետով երկարաձգել ԼԷ №0601 լիցենզիայով ամրագրված «ՎԱՅՈՑ ԱՐԵՎ» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝ Հանձնաժողովի 2017 թվականի մարտի 29-ի «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանա-տվությամբ ընկերությանը «ՎԱՅՈՑ ԱՐԵՎ» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №105Ա որոշման մեջ «մինչև 2018 թվականի մարտի 31-ը» բառերը փոխարինելով «մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը» բառերով:
2. «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
3. Ընկերությանը՝ ԼԷ №0601 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «ՎԱՅՈՑ ԱՐԵՎ» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

   1) մեկամսյա ժամկետում «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի նոյեմբերի 7-ի №01-1158 գրությամբ ներկայացված №174406979 բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված երկու միլիոն չորս հարյուր ութսունչորս հազար դրամ գումարից մեկ միլիոն երկու հարյուր քառասուներկու հազար դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

   2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել երկու միլիոն չորս հարյուր ութսունչորս հազար դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2018 թվականի նոյեմբերի 14-ը գործողության ժամկետով:

4. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի մարտի 31-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
7 մարտի 2018թ.